

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՍՔԻ ՄԵՋ

Ո. Ն. ՇԱՒՈՒՆՑ

Համանունությունը օրինաչափ երևույթ է լեզվի համար. «Ամբողջ լեզվական մեխանիզմը,—գրում է Ֆ. Սոսյուրը,—պտտվում է բացառապես նույնությունների և տարբերությունների շուրջը, ընդ որում այդ վերջինները առաջինների սոսկ հակառակ կողմերն են»¹: Լեզվի համակարգի համար կատարյալ կլիներ, եթե լեզվական յուրաքանչյուր իմաստակիր միավոր «արտաքին կաղամով» ևս լիներ սահմանադատված և տարբերակված: Բայց աշխարհի ոչ մի լեզու օժտված չէ նման հատկությամբ. ամենահարուստ լեզուն անգամ ի վիճակի չէ յուրաքանչյուր կոնկրետ իմաստ արտահայտել ինքնուրույն և առանձին միավորներով: Սակայն ինչպե՞ս մեկնաբանել այն փաստը, որ որոշ լեզվաբաններ համանուն բառերի առկայությունը բառապաշարի համակարգում դիտում են որպես բացասական երևույթ: Փորձենք թերթել լեզվաբանության պատմության էջերը և ծանոթանանք տարբեր լեզվաբանների կողմից համանուն բառերի վերաբերյալ արտահայտած մի քանի կարծիքների:

Համանուն բառերը, նրանց առաջացման աղբյուրները և գործածությունից դուրս գալու հետ կապված հարցերը հետաքրքրել են ֆրանսիական հայտնի բարբառագետ Ժիլյերոնին և նրա հետևորդներին²: Ժիլյերոնը իր ուսումնասիրությունների ընթացքում նկատել է, որ որոշ բառեր դուրս են եկել ֆրանսերեն լեզվի բառապաշարի համակարգից սոսկ այն պատճառով, որ հնչյունական փոփոխությունների հետևանքով արտասանությամբ զուգահեռվել են այլ բառերի հետ: Այստեղից նա եզրակացնում է, որ հնչյունական փոփոխությունները կործանարար են բառերի համար: Ժիլյերոնը և նրա հետևորդները գտնում են, որ լեզուն «համբերատարությամբ» տանում է համանունությունը շնորհիվ այն բանի, որ համանուն բառերից շատերը ունեն տարբեր հատկանիշներ, ինչպես. 1) համանուն զույգերը պատկանում են տարբեր խոսքի մասերի. *chier*—թանկագին, սիրելի, *la cheur*—ամբիոն. 2) համանուն զույգերը անեն տարբեր սեռ. *la livre*—ֆունտ (ծանրություն չափ և գրամական միավոր), *le livre*—գիրք, 3) համանուն զույգերը գրովյալ տարբեր են. *le champ*—դաշտ, *le chant*—երգեցողություն:

Հնդհանրապես Ժիլյերոնը լեզվական փոփոխությունների կարևոր պատճառներից մեկը համարում է այն, որ խոսողը ձգտում է պարզության և հասկանալիության: Ծիշտ բացատրելով համանունության հետ կապված շատ հարցեր, Ժիլյերոնը և նրա հետևորդները առաջ էին քաշում այն տեսակետը, թե

¹ Ф. де Соссюр. Курс общей лингвистики, М., 1953.

² Տե՛ս, օրինակ, J. Gilleron et Roques, Études de géographie linguistique, Paris, 1912, ինչպես նաև նույն հեղինակների հոդվածը «Revue de philologie et Littérature», Paris, 1910.

համանունությունը «ախտաբանություն» է և կարիք ունի բուժման միջոցառումների: Բառիմաստի զերծանրաբեռնվածությունը, արտահայտչականության կորուստը դիտում են որպես «իմաստային հիպերտրոֆիա»: Նրանց կարծիքով հնչյունական փոփոխությունները ախտաբանական գործոններ են, որոնք կարող են բառը հասցնել թուլության, մինչև անգամ կորստի և համանունության: Եթե համանուն բառերը «տանելի» են, մնում են բառապաշարում, իսկ եթե «անտանելի» են, այդ դեպքում նրանցից մեկը կորչում է:

1922 թ. Անգլիայում հրատարակվում է Բրիչեզի մենագրական ուսումնասիրությունը անգլերեն լեզվի համանունների վերաբերյալ³: Հեղինակը, ուսումնասիրելով համանունների առկայությունը անգլերեն լեզվի բառապաշարի համակարգում, հանգում է այն եզրակացության, որ համանուն բառերը լեզվի համար «չար», «ինքնակործանարար», «դժբախտ» երևույթ են: Համանունների վերաբերյալ ունեցած Բրիչեզի այս կարծիքը ազդեցություն է թողել հետագա լեզվաբանների վրա, որոնք հաճախ են խոսել համանունների «երկակի» բնույթի մասին: Բրիչեզի կարծիքով արտասանությամբ համընկնող և իմաստով տարբեր բառերը ստեղծում են «երկիմաստություն»: Համանունական զույգերից մեկը մեծ մասամբ պատկանում է հնաբանությանը և այդ բառերի իմաստները հասկանալու համար միշտ պետք է ելնել կոնտեքստային կիրառությունից: Նրա կարծիքով հաղորդակցության ժամանակ երկիմաստության տեղիք չեն տալիս միայն տարբեր խոսքի մասերի պատկանող համանուն բառերը, քանի որ դրանց կիրառության դեպքում տեղի չեն ունենում շարահյուսական կանոնների շեղումներ:

Նման կարծիքներ են արտահայտվել նաև ռուս գրականության մեջ. Լ. Ա. Բուլախովսկին 1928 թ. գրած «Համանունների մասին» իր հոդվածում, դասակարգելով տարբեր տիպի համանունները, միաժամանակ նշում է, որ լեզուն «համբերատարությամբ» տանում է բազմաձև համանունների առկայությունը⁴:

Ա. Ա. Ռեֆորմատսկին գրում է, որ հազիվ թե ձիշտ լինեն այն հեղինակները, որոնք համանունության առաջացումը համարում են բառապաշարի հարստացման միջոց: Համանուն բառերի՝ լեզվում կատարած միակ դրական դերը, նրա կարծիքով, դրանց գործածությունն է անեկզոտների և բառախաղերի մեջ: «Մնացած բոլոր դեպքերում,— գրում է նա,— համանունները խոչընդոտ են փոխըմբռնման համար»⁵:

Հայերենը նույնպես հարուստ է համանուններով. ժամանակակից հայերենում կան 2 հազարից ավելի համանուն բառեր, որոնք կազմում են ամբողջ բառապաշարի 2 տոկոսը: Այդ բառերից են, օրինակ՝ աղերս₁-կապ, առնչություն, աղերս₂-աղաչանք, պաղատանք, բազուկ₁-ձեռք, թևք, բազուկ₂-ձականդեղ, բաբ₁-շեղջ, դեղ, բաբ₂-ոչ պարզ, խճճված, բոքե₁-հրել, բոքե₂-գուժել, գանձ₁-ոսկու, արծաթի, թանկագին իրերի ամբողջություն, գանձ₂-եկեղեցական երգ, դաս₁-ուսումնառություն, դասաժամ, դաս₂-խավ, լալ₁-սուակ, լալ₂-արտասվել, րալ₁-թաղամաս, րալ₂-այգեթաղ, րալ₃-գետնատարած բույսերի ճյուղերը, րալ₄-(ճարտարապետական) աղյուսներով կամ քարերով ազուցված

³ R. Bridges. On English Homophones, Oxford, 1922, vol. I, tract 2.

⁴ Л. А. Булаховский. Из жизни омонимов, տե՛ս «Русская речь», новая серия, III, 1., 1928.

⁵ А. А. Реформатский, Введение в языковедение, 1967, էջ 89:

կամարածե ծածկ և այլն: Արդյո՞ք այս բառերը հայերենի համար «հիվանդագին» երևույթ են և հաղորդակցության ընթացքում տեղիք են տալիս թյուրիմացության և երկիմաստության. այս հարցը պարզելու համար համառոտակի անդրադառնանք համանունների կիրառմանը խոսքի մեջ, որոշենք նրանց դերը բառային շրջապատում և գործառնությունը՝ խոսքային ակտում:

«Խոսք» անվան տակ ի նկատի ունենք տեքստը, այսինքն՝ որևէ հեղինակի կողմից գրված ասույթների ամբողջությունը:

Խոսքի ակտում համանուն բառերը կարելի է դիտել երկու տեսանկյունից. 1) խոսողի (նաև գրողի), 2) լսողի (նաև կարդացողի): Խոսքի ընթացքում համանունության խնդիրը խոսողի համար երկրորդ պլանում է. եթե նա օգտագործում է որևէ բառ-համանուն, այդ պահին չի մտածում, որ տվյալ լեզվի համակարգում կա նաև այդ բառին համահնչյուն մի այլ բառ, և լսողը կարող է շփոթել դրանք իրար հետ կամ սխալ հասկանալ ասույթի իմաստը: Ուրեմն խոսողի կամ գրողի համար կարևոր է բառի ոչ թե հնչական, այլ իմաստային կողմը, իսկ լսողի կամ ընթերցողի համար՝ նաև բառի հնչական կողմը: Եթե միևնույն հնչյունական կազմով այդ լեզվում կան երկու և ավելի տարբեր բառեր, լսողը կարող է երկմտել, թե այդ բառերից որն ի նկատի ունի խոսողը:

Տարբեր իմաստ ունեցող բառերի իրացումը տեղի է ունենում կոնտեքստում: Սովորաբար «կոնտեքստ» անվան տակ ի նկատի են ունենում բառային շրջապատը, որը հնարավորություն է տալիս ճշտորեն որոշել տվյալ ասույթում գործառնված բառերի իմաստները:

Համանուն բառերի բառական իմաստները կազմում են լեզվի ընդհանուր համակարգի սի մասը: Դրանք ձևավորվում են լեզվի այլ կողմերի հետ համակցված: Լեզվի իմաստային համակարգը խոշոր դեր է կատարում առանձին բառերի ձևավորման մեջ: Այս տեսակետից բառ-համանունները պետք է դիտել ոչ թե որպես բառերի առանձին խումբ՝ կտրված լեզվի բառապաշարից, այլ բառապաշարի համակարգում, նրանց փոխադարձ հարաբերությամբ:

Համանուն բառերի տարբեր իմաստների բացահայտումը ավելի ակնառու կերպով երևան է գալիս բառային տարբեր շրջապատում: Այդ տեսակետից մեծ դեր է կատարում նաև տվյալ լեզվի համակարգը: Ինչպես ճիշտ կերպով նշել է Լ. Վալսգերբերը, համանուն բառերի իմաստները տեղադրվում են լեզվական համակարգում⁶: Եթե հայերենի բառային համակարգում չլինեին «քրիստոնեական տոն» և «փոքր միջատ» իմաստները, կոնտեքստը չէր կարող ստեղծել զատիկ₁ և զատիկ₂ համանունները: Կամ եթե հայերենի բառական համակարգում չլինեին «հորեղբոր աղջիկ» և «պերճածաղիկ» իմաստները, կոնտեքստը չէր կարող ստեղծել զարմուռի₁ և զարմուռի₂ համանունները:

Համանուն բառերի բառական տարբեր իմաստների գործառնությունը կոնտեքստում և կոնտեքստի դերը այդ իմաստների սահմանադատման խնդրում ավելի հաջող քննելու և լավ պատկերացնելու համար ներմուծենք իմաստային ցուցիչ (ինդիկատոր) տերմինը⁷: Այդպես են կոչվում կոնտեքստի այն բոլոր տարրերը, որոնք օգնում են բացահայտելու համանուն բառերի տարբեր իմաստները:

⁶ L. Weisgerber, Die vier Stufen in der Erforschung der Sprachen. Düsseldorf, 1963, էջ 68:

⁷ Այս տերմինը փոխ ենք առնում՝ Ս. Н. Г л а д к и й, Лексическая омонимия имен существительных в современном немецком языке ավտորեֆերատից, Киев, 1967.

Հայերենի բառական համակարգում ունենք *ֆուրդ*₁-*(ազգ)* և *ֆուրդ*₂-*(ծաղիկ)* համանուն բառերը. «Շատ դաբեք տանջեցին տանիկ, պարսիկ, հույն և ֆուրդ» (ՀԹ) կոնտեքստում որպես իմաստային ցուցիչ կարող է ծառայել «տանջեցին» բայը: Այդ բայը իր բառական իմաստով օգնում է ընթերցողին անմիջապես ընկալելու, որ տվյալ կոնտեքստում գործածված է *ֆուրդ*₁ *(ազգ)* բառը և ոչ թե *ֆուրդ*₂ *(ծաղիկ)*: Իսկ «Քուրդը բուսել է վեհտ ջրերի ափին» (ՀԹ) կոնտեքստում «բուսել է» բայը հուշում է ընթերցողին, որ այդ կոնտեքստում գործածված է *ֆուրդ*₂ *(ծաղիկ)* և ոչ թե *ֆուրդ*₁ *(ազգ)* համանունը: Ուրեմն կարելի է ասել, որ առաջին օրինակի համար որպես իմաստային ցուցիչ է ծառայում տանջեցին բայը, իսկ երկրորդ օրինակի համար՝ բուսել է բայը:

Որպես իմաստային ցուցիչներ կարող են ծառայել ոչ միայն բայերը, այլև այլ խոսքի մասերին պատկանող բառերը: Ամեն անգամ համանուն բառերի իմաստային ցուցիչը որոշելիս պետք է ելնել կոնկրետ կոնտեքստից:

Համանուն գոյականների համար որպես իմաստային ցուցիչ կարող են ծառայել գոյականները, ածականները, բայերը, թվականները:

Հայերենի բառային համակարգում ունենք *փրփրուկ*₁-*(ձկան տեսակ)* և *փրփրուկ*₂-*(ծաղիկի անուն)* գոյականները: Այս համանունները պատկանում են իմաստային տարբեր դաշտերի, քանի որ առաջինը մտնում է «կենդանիների անունների» մեջ, իսկ երկրորդը՝ «ծաղիկի անունների»: «Փրփրուկը Բարենցի ծովում մեծ ֆանակուրյամբ երևում է ամռան երկրորդ կեսին» *(ղասագիրք)*: Փրփրուկ₁-*(ձուկ)* համանվան համար որպես իմաստային ցուցիչ կծառայեն «Բարենցի ծովում» բառերը, իսկ *փրփրուկ*₂-*ի (ծաղիկ)* համար՝ *ծաղիկ* է բայը. «...Պատշգամներում ծաղիկ է եմ ծխածաղիկը, աղավնիքը, փրփրուկը, գինածաղիկը» *(մամուլ)*:

Բայը իմաստային ցուցիչ է ծառայում համանուն գոյականների համար, եթե վերջիններս նախադասության մեջ կատարում են ենթակայի կամ խնդրի շարահյուսական դեր. օրինակ՝ «Իտե և մի ուրիշ դարման, որ կյանքը հարյուրավոր տարիներով երկարեցնում է» *(Բաֆֆի)* կոնտեքստում երկարեցնում է բայը ցույց է տալիս, որ այստեղ գործածված է դարման₁-*(դեղամիջոց)* բառը, իսկ «Հին դարմանը ֆամուն շեն տա» *(ՊՊ)* նախադասության մեջ շեն տա բայը իր իմաստով հուշում է դարման₂-*ի (հարգի գործառնության մասին)*:

Ընդհանրապես տարբեր համանունների համար բնորոշ է բառական տարբեր արժույթայնություն: Տարբեր գոյական-համանուններ կապակցվում են տարբեր ածականների հետ: Կարելի է ասել, որ ածականները և թվականները համանուն գոյականների համար իմաստային ցուցիչներ են ծառայում այն ժամանակ, երբ այդ ածականները և թվականները տվյալ գոյականի համար կատարում են որոշիչի պաշտոն:

Պատահում են դեպքեր, երբ շատ դժվար է լինում որոշել համանուն բառերի իմաստային ցուցիչը: Այդպես է լինում մեծ մասամբ այն դեպքերում, երբ համանուն բառերը պատկանում են միևնույն խոսքի մասերին: Համեմատաբար ավելի հեշտ է տարբեր խոսքի մասերի պատկանող համանուն բառերի իմաստային ցուցիչների որոշումը:

«Ընկալ, ծերուկ, քո Հեկտորը, հաճախ լույսը քո հոգու» (ՀԹ) և «Նրա սխալներն ու բուլդոզերներն անցնելով ու անցնելով, տեսնենք, քե վերջիվերջս ընչի հանգավ, ինչ գտավ» (ՀԹ): Առաջին կոնտեքստում լույս գոյականը ծառայում է որպես իմաստային բանալի հանգել *(մարել)* համանուն բայի հա-

մար: Մյուս կոնտեքստում նույն դերը կատարում է նա զեղչված դերանունը հանգել (եզրակացության գալ) բայ-համանվան համար: Կամ՝ «Մի խումբ զինվորներ արշավում էին դեպի մեզ: Գրությունը նորից լրջանում էր» (ՎՎ) և «Պալատը երեկոն ժպտում էր ու հետզհետե լրջանում» (ԻԻ) կոնտեքստներում դրություն գոյականը ծառայում է որպես իմաստային բանալի լրջանալ (լուրջ դառնալ, ծանրանալ) համանուն բայի համար, իսկ մյուս կոնտեքստում երեկոն գոյականը՝ լրջանալ (լուրթ գույն ստանալ, երկնագույն դառնալ) բայ-համանվան համար:

Հայերենի բառային համակարգում ունենք փոզային¹ «դրամական» և փոզային² «փչող գործիքներով կատարվող» համանուն ածականները: Այս ածականները կոնկրետ խոսքային ակտում կապակցվում են տարբեր գոյականների հետ: Օրինակ. «Առևտրական կապիտալն իր գոյության համար պարզ պարանոցի և փոզային շրջանառությունից բացի ոչինչ չի պահանջում» (դասագիրք) և «Փոզային նվագախումբը կատարեց Սովետական Միության պետական հիմնը» (մամուլ) կոնտեքստներից առաջինում գործառված է Փ₁-«դրամական» համանունը, որի համար որպես իմաստային ցուցիչ է ծառայում նրան կապակցված «շրջանառությունից» գոյականը, իսկ Փ₂-«փչող գործիքներով կատարվող» համանվան համար՝ նրան կապակցված «նվագախումբ» գոյականը: Բայց «Կովկասը հանդիսանում էր միակ և հավաստի կովանը Արևելքում...» (ՀԹ) և «Հայրս տանում էր ինձ ու դնում կովան գոմեշի մեջքին» (Հր. Քոչար) կոնտեքստներում Կ₁-«հենարան» և Կ₂-«կովարար» համանունները տարբեր խոսքի մասերի պատկանող և իմաստով հեռու բառեր են: Կ₁ և Կ₂ համանուն բառերի և նրանց իմաստային ցուցիչների միջև գոյություն ունի շարահյուսական տարբեր հարաբերություն. այդ համանուն բառերը և նրանց իմաստային ցուցիչները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ: Կ₁-«հենարան» համանվան համար իմաստային ցուցիչներ են «միակ և հավաստի» ածականները, իսկ Կ₂ «կովարար» համանվան համար՝ «գոմեշ» գոյականը: Այս համանուն բառերի և նրանց իմաստային ցուցիչների միջև գոյություն ունի իմաստային համաձայնություն: Եվ ընդհանրապես, խոսքային ակտում գործառված բոլոր համանուն բառերի և նրանց իմաստային ցուցիչների միջև միշտ էլ գոյություն ունի իմաստային համաձայնություն⁸:

Պատահում է, որ ընթերցողը կամ լսողը չի ընկալում կամ սխալ է ընկալում բառ-համանվան իմաստը: Այդ մեծ մասամբ պատահում է այն դեպքերում, երբ համանուն բառերից մեկը օգտագործվում է որպես միակազմ նախադասություն, այսինքն՝ երբ հատկանիշը և այն կրող առարկան տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի և ստորոգյալի միջոցով. գեղարվեստական խոսքում՝ թե՛ արձակում, և թե՛ շափածոյում, հանդիպում են համանուն բառով արտահայտված անվանական անդեմ միակազմ նախադասություններ, ինչպես «Փողեր»: Միայն կոնտեքստից կամ նրան հաջորդող նախադասությունից կարելի է հասկանալ, որ այստեղ գործառված է ոչ թե Փ₁-խողովակ, Փ₂-դրամ, այլ՝ Փ₃-երաժշտական գործիք համանունը. «Փողեր: Մտնում են՝ մեկը առջևից բերելով քաղը, լիր աբբան, Կուրնվոլը, Օլբենին...» (Վ. Շեքսպիր, «Լիր արքա»):

⁸ Իմաստային համաձայնության մասին տե՛ս E. L e i s i, Der Wortinhalt, 2. Aufl, Heidelberg, 1961, էջ 69:

Երբեմն պատահում է, որ պարզ ընդարձակ նախադասության մեջ օգտագործված բառ-համանվան իմաստը ևս կասկածանք է հարուցում: Օրինակ՝ «Նա մտածում է լավ կադրեր ունենալ» նախադասության մեջ կադր բառը ըստեղծում է մտքի երկդիմություն, քանի որ ժամանակակից հայերենի բառային համակարգում ունենք կադր₁ և կադր₂ համանունները: Միայն նախորդ և հաջորդ նախադասությունները կամ լրիվ տեքստը կարող են օգնել հասկանալու՝ տվյալ ասույթում խոսքը աշխատանքային, թե՞ կինոնկարի կադրերի մասին է:

Շատ հազվադեպ է պատահում, որ բարդ նախադասության մեջ գործառված բառ-համանունը մտքի երկդիմություն առաջացնի: Օրինակ. «Ահա էս բոլոր ետ առի— ուրբան լույս ճառագայթեց դեմֆիլ վրայեն՝ ակին մեջ» նախադասությունում պարզ չի արտահայտվում, թե որ բառ-համանունն է գործառվել: Միայն նախորդ նախադասությունից կարող ենք իմանալ, որ տվյալ նախադասության մեջ կիրառված է ոչ թե Ա₁-աչք, Ա₂-թանկագին քար, Ա₃-անիվ, այլ Ա₄-աղբյուր համանունը. «Մալե— ծունկերդ դողող և աղբյուրին վրա ծոե: Ահա էս բոլոր ետ առի— ուրբան լույս ճառագայթեց դեմֆիլ վրայեն՝ ակին մեջ» (ԴՎ):

Հազվադեպ է պատահում, որ համանուն բառերի իմաստային ցուցիչը չլինի կոնտեքստում: Նման դեպքերում, երբ միևնույն բառային շրջապատում հանդես են գալիս երկու համանուն բառեր, ընթերցողը կարող է կասկածել, թե այդ համանուններից որն է գործառված: Օրինակ՝ «Ճիշտն ասած, հոգուս խորում ես ինձ անպարտ եմ զգում, բայց դրանով սիրտս չի՝ թեթևանում, բնավ, քանի հիշում եմ կատարվածը» (Ստ. Ջոր.) տեքստում անպարտ հնչյունական կապակցությունը կարելի է հասկանալ Ա₁-«անպարտելի», Ա₂-անմեղ և Ա₃-անպարտք կամ «Երե տերը հաջողություն կտա, ինչ մեծ բան է նրա վարելը» (Բ) տեքստում վարելը կարելի է հասկանալ և՛ Վ₁-բշել, առաջ շարժել, և՛ Վ₂-հերկել: Միայն մեծ կոնտեքստը, նախորդ նախադասությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ տալ տվյալ համանուն բառի իմաստի մասին:

Բացի վերը նշված միջոցներից կոնկրետ խոսքային իրադրությունը ևս կարող է նպաստել և ընդհակառակը, խանգարել համանուն բառի իմաստի բացահայտմանը:

Հնարավոր է, որ գեղարվեստական ստեղծագործություններում, միևնույն նախադասության մեջ գործառվեն երկու համանուն բառեր՝ որպես հեղինակի կողմից օգտագործվող ոճական հնարանք: Այս երևույթը ավելի նկատելի է ռուսերեն լեզվում. «Мир без оружия— мир без войны», «Защита мира— дело всех народов мира». Սակայն մի շարք հայ հեղինակների ստեղծագործություններում մեզ չհաջողվեց գտնել զեթ մեկ օրինակ:

Եթե միևնույն ասույթում կիրառվում են երկու համանուն բառեր, ապա կոնտեքստը դարձյալ հնարավորություն է տալիս որոշելու երկու բառերի իմաստները, իսկ եթե կիրառվում է միայն մեկ համանունը և կարելի է հասկանալ «երկու իմաստները», այս դեպքում դժվար է որոշել, թե որ համանունն է կիրառվել:

Համանուն բառերն օգտագործվում են բառախաղային արտահայտություններում և անեկզոտներում: Երբեմն էլ բառախաղային արտահայտություններում կիրառվում է համանուններից մեկը, բայց պետք է հասկանալ մյուսը: Նման տիպի բառախաղերի հիմնական պայմաններից մեկը համանուն բառերի միջոցով ստեղծված մտքի երկդիմությունն է: Սակայն համանուն բառերով 9 Հանգես, № 2

բառախաղ ստեղծելը հեշտ չէ. այն պահանջում է զգուշութուն և վարպետութուն:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է եզրակացնել, որ համահնչյուն բառերի իմաստային տարբերությունները բացահայտվում են, երբ նրանք հանդես են գալիս տարբեր կիրառություններում: Հայերենում հազվադեպ է պատահում, որ համանուն զույգերը կամ եռյակները հանդես գան բառական միևնույն շրջապատում: Հետևապես, համանուն բառերը չեն խանգարում փոխըմբռնմանը: Բառական կոնտեքստից որոշվում է, թե համանուններից որն է գործառվել: Մեր կողմից քննված ավելի քան 900 նախադասություններում, որոնցից միայն մի քանիսը բերեցինք այս հոդվածում, համանուն բառերը փոխըմբռնման արգելք չեն դառնում:

Այս ամենից բխում է. համանուն բառերը գործառվում են աարբեր կոնտեքստներում և նրանց համար բնորոշ է բառական տարբեր արժույթայնություն: Համանուն բառերը գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ և բացառում են խոսքում առաջացող ոչ սիշտ փոխըմբռնումը:

Համառոտագրություններ. ԴԴ—Դերենիկ Դեմիրճյան, ԴՎ—Դանիել Վարուժան, ՀԹ—Հովհաննես Թումանյան, ՊՊ—Պերճ Պողոսյան, Ստ. Զոր.—Ստեփան Զորյան, ՎՎ—Վաղարշ Վաղարշյան, Բ—Բաֆֆի:

ФУНКЦИОНИРОВАНИЕ ОМОНИМОВ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА В РЕЧИ

Р. Н. ШАЛУНЦ

(Резюме)

В современном армянском языке имеется более 2000 омонимичных слов, которые составляют 2 процента всей лексики. В статье определена роль омонимичных слов в словесном окружении и их функционирование в речевом акте.

Семантические различия созвучных слов выявляются, когда они выступают в разных контекстах. Для доказательства в статье определены все те элементы контекста, которые помогают выявлять разные значения омонимичных слов.

В армянском языке омонимичные слова редко выступают в одинаковом словесном окружении. Следовательно, омонимы не мешают взаимопониманию. Отсюда следует, что омонимичные слова функционируют в разных контекстах и им свойственна разная лексическая валентность. Омонимы находятся в отношении дополнительной дистрибуции и исключают возникающие в речи неправильные взаимопонимания.